ԳՈՐԾԱՐԱՐ ԷԹԻԿԱ ԵՎ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐ

Բանկը հավատարիմ լինելով իր առաքելությանը, այն է՝ **«Լինել առաջին ընտրության Բանկ հաճախորդների համար՝ որպես լավագույն նորարար Բանկ»**, ձգտում է լինել վստահելի և կայուն գործընկեր իր հաճախորդների համար, թվային և ինֆորմացիոն տեխնոլոգիաների նորարական լուծումների կիրառմամբ ապահովել բանկային ծառայությունների մատուցման մատչելիությունը և օպերատիվությունը:

Ըստ այդմ՝ Բանկը որդեգրել է այնպիսի հիմնարար արժեքներ, ինչպիսիք են.

- **Մենք նորարար ենք.**

Մենք կարևորում ենք մեր հաճախորդների պահանջմունքները՝ ստեղծելով նորարարական էկոհամակարգ:

- **Մենք թափանցիկ ենք.**

Մենք կարևորում ենք թափանցիկությունը մեր հաճախորդների նկատմամբ՝ տրամադրելով համալիր տեղեկատվություն մատուցվող բանկային ծառայությունների մասին:

- **Մենք վստահելի ենք.**

Մենք կարևորում ենք մեր հաճախորդների և գործընկերների վստահությունը՝ համագործակցելով նրանց հետ որպես հուսալի գործընկեր:

- **Մենք հավատարիմ ենք.**

Մենք կարևորում ենք մեր հաճախորդների և աշխատողների հավատարմությունը՝ նրանց համար ապահովելով կայուն մրցակցային առավելություններ:

- **Մենք թիմային ենք.**

Մենք կարևորում ենք մեր աշխատակիցների միջև ներդաշնակ համագործակցությունը՝ հանուն ընդհանուր արդյունքի:

Հաճախորդին առավելագույնս գոհացնելը, նրա համար հարմարավետ բանկային ծառայությունների գրավիչ պայմանների ստեղծումը Բանկի կարևորագույն նպատակներից է: Բանկի յուրաքանչյուր աշխատակից պատասխանատվություն է կրում պատշաճ կերպով հաճախորդների սպասարկման, Բանկի աշխատակիցների և մատուցվող ծառայությունների նկատմամբ վստահության ներշնչման համար:

Այս կապակցությամբ Բանկը կարևորում է Բանկում գործող գործարար էթիկայի և վարքագծի կանոնների պահպանումը:

Յուրաքանչյուր աշխատակից պարտավոր է իր գործողություններում և պարտականությունների կատարման ընթացքում խստագույնս հետևել Բանկի կողմից սահմանված արտաքին տեսքի, գործարար ոճի, աշխատակիցների գործունեությանը և վարքագծի կանոններին թե գործընկերների, թե հաճախորդների հետ շփման ընթացքում:

► Արտաքին տեսքը և գործարար ոճը

Բանկի բարի համբավի, բարձր վարկանիշի և սպասարկման որակի մակարդակի ապահովման նպատակով աշխատակիցների համար սահմանվում են արտաքին տեսքի և գործարար ոճի միասնական ստանդարտներ: Վերջիններս հանդիսանում են Բանկի կորպորատիվ մշակույթի կարևորագույն տարրերից մեկը, համաձայն որի, անձնակազմը պարտավոր է ամբողջ աշխատանքային շաբաթվա ընթացքում պահպանել այն, որպես գործարար էթիկայի անբաժանելի մաս:

Աշխատակցի արտաքին տեսքը Բանկի հաճախորդների ընդհանուր տպավորության, ինչպես նաև կորպորատիվ բրենդի կարևոր մասն է կազմում և պետք է լինի ներկայացուցչական, մաքուր, կոկիկ, համեստ, տարիքին և դիրքին, Բանկի պահանջներով արտաքին տեսքի և գործարար ոճի միասնական ստանդարտներին համապատասխան:

► Նվերներ և արտոնություններ

Բանկը հետևում է հակակոռուպցիոն օրենսդրության պահանջներին նվերների և այլ արտոնությունների հարցում: Բանկի աշխատակիցներին արգելվում է անձնական բնույթի ցանկացած տեսակի նվերների, հրավերների ընդունումը:

► Գաղտնիություն

Բանկի աշխատակիցները իրենց գործունեության ընթացքում պետք է ղեկավարվեն «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև առևտրային գաղտնիքի վերաբերյալ օրենսդրական դրույթներով և Բանկի ներքին իրավական ակտերով:

Արգելվում է երրորդ անձանց հայտնել և/կամ հրապարակել բանկային, Բանկի առևտրային գաղտնիք կազմող տեղեկություններ կամ Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված գաղտնի համարվող փաստաթղթերում պարունակվող որևէ տեղեկատվություն:

Այն աշխատակիցները, որոնք կխախտեն գաղտնիության կանոնները, կենթարկվեն քրեական, վարչական, քաղաքացիական և/կամ կարգապահական պատասխանատվության:

► Շահերի բախում

Բանկը միջոցներ է ձեռնարկում թույլ չտալու բոլոր տեսակի շահերի բախումը:

Բանկը պարբերաբար իրականացնում է Բանկի, Բանկի աշխատակիցների, վերջիններիս և/կամ Բանկի հետ կապված այլ անձանց, հաճախորդների միջև շահերի բախման հնարավոր կամ արդեն իսկ ի հայտ եկած դեպքերի բացահայտում/ուսումնասիրություն, դրանց վերացմանն ու կանխարգելմանն ուղղված միջոցառումներ:

➢ Խորհրդատվական ծառայություններ և աուդիտ

Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան՝ ներկայացնում ենք այն վճարները, որոնք գանձվել են ֆինանսական հաշվետվություններում ընդգրկված ժամանակահատվածում EY և EY ցանցի անդամ ընկերությունների կողմից Բանկին մատուցվող աուդիտորական և ոչ աուդիտորական ծառայությունների համար.

- Աուդիտորական ծառայություններ՝ 39,000K ՀՀ առանց ԱԱՀ,
- Հարկային խորհրդատվություն՝ 4,800K ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի,
- Տրանսֆերային գնագոյացման ծառայություններ՝600K ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի: